DOI: 10.54503/1829-4324.2024.2-264

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ- ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՄԻԳՐԱՑԻԱՆ ԴՈՆՈՐ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՂ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՇՈՂԵՐ ՊՈՂՈՍՅԱՆ

Հոդվածը ստացվել է՝ 02.09.24, ուղարկվել է գրախոսման՝ 04.12.24, երաշխավորվել է տպագրության՝ 13.12.24

Ներածություն: Միգրացիայի պատճառները բազում են: Տնտեսական և ոչ տնտեսական նկատառումներով դրդված միգրանտների միջև տարբերությունը հաճախ միաձուլված է, միգրանտների լավագույն համեմատությունը գետն է. այն, ինչ սկսվում է որպես մեկ ալիք, որը կարելի է կառավարել ամբարտակով, կարող է դառնալ դելտա կազմող գետերի մի շարք: Այս առումով այսօր անգնահատելի է թվային տեխնոլոգիաների դերը միգրացիայի ողջ կառավարման գործընթացում: Աշխարհում միգրացիայի աճով պայմանավորված (այդ թվում՝ որոշ արտակարգ իրավիճակների պատճառով) նկատվում է վարչական ընթացակարգերի և տվյալների ծավալի աճ, որոնք գնալով դժվարանում են մշակել և օգտագործել: Այս խնդիրը լուծելու համար երկրները մշակում և իրականացնում են թվային լուծումների բազմազանություն՝ ընդլայնելով ներդրումները մեքենայական ուսուցման տեխնոլոգիաների և արհեստական բանականության վերլուծական գործիքների մեջ: Միևնույն ժամանակ, փորձագետներն ընդգծում են, որ արհեստական բանականության տեխնոլոգիաների ներդրումը կախված է միգրացիայի վերաբերյալ տվյալների հավաքագրման համար օգտագործվող թվային գործիքների զարգացման մակարդակից[1]:

Միգրացիայի արդյունավետ կառավարումը արագ փոփոխվող աշխարհաքաղաքական իրավիճակում անհնար է առանց տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ ներգրավուսումնասիրվածության, թվային գործիքակազմի փոփոխության ինչն էլ պայմանավորում է մեր **հետազոտության արդիականությունը:**

Հետազոտության **նպատակն է** ուսումնասիրել՝ թվայնացման հետևանքները միգրացիան ընդունող և դոնոր երկրների կառավարման գործընթացների վրա: Հետազոտության **խնդիրն է** վերլուծել **ընդունող և դոնոր երկրների միգրացիոն հոսքերը**, ինչպես նաև միգրացիոն գործընթացների արդյունավետ կառավարումը:

Գրականության վերլուծություն: Այսօր աշխարհում սահմաններին արգելափակված և ոչ պաշտոնական բնակավայրերում ապրող մարդկանց թիվն

[1] McAuliffe, M., Blower J., Beduschi, A., Digitalization and Artificial Intelligence in Migration and Mobility: Transnational Implications of the COVID-19 Pandemic, Societies 2021, *11*(4), 135, https://doi.org/10.3390/soc11040135

ավելանում է՝ տարրական կարիքների և առողջապահական խնամքի սահմանափակ հասանելիությամբ[2]: Միգրացիան վերափոխվում է թվայնացման ազդեցության ներքո և դառնում ինքնին մարտահրավեր երկրների համար[3]:

Միգրացիայի ուսումնասիրության մեջ զգալի ներդրում է ունեցել Ս. Ստոուֆերը: Նրա «Շարժունակության և հեռավորության փոխազդեցության տեսությունը» («Interfering Circumstances») հոդվածը հրատարակվել է 1940 թվականին[4]: Ըստ Ստաուֆերի, երկու կետերի հեռավորությունն ու բնակչությունը զուգորդվում են այնպիսի գործոնների հետ, ինչպիսիք են՝ դրանց միջև միգրացիոն հոսքերի ծավալն ու «որակը» որոշող այլ գործոնները, նկատելով թե «Որոշ հեռավորության վրա շարժվող մարդկանց թիվն ուղիղ համեմատական է բացվող հեռանկարների քանակին և հակադարձ համեմատական՝ խանգարող հանգամանքների թվին»:

Ստոուֆերը «միջամտող հանգամանքներ» համարեց այն ամենը, ինչը բարդացնում է միգրացիոն գործընթացը (օրինակ՝ տեղափոխման ծախսերը, միգրացիոն տեղաշարժերի օրենսդրական սահմանափակումները, միգրանտի կրթության և տեղեկացվածության անբավարար մակարդակը, միգրանտների նկատմամբ տեղի բնակչության բացասական վերաբերմունքը և այլն): Ստոուֆերը «միջամտող հանգամանքների» վերլուծությունը համարեց միգրացիայի կառավարման ոլորտում իր հետազոտական աշխատանքի ամենակարևոր մասը՝ հատկապես ուշադրություն դարձնելով միգրանտների հոսքին և սոցիալական հարմարվողականությանը:

Միգրացիոն դեգերումների ժամանակ մարդիկ կարող են տեղեկատվություն հավաքել և խորհրդատվություն ստանալ իրական ժամանակում, ինչը հետաքրքրություն է առաջացնում, իսկ երբեմն՝ մտահոգություն: Տեղեկատվության փոխանակման և աշխարհագրորեն ցրված խմբերին միավորելու համար հավելվածների օգտագործումը հիմնավոր հարցեր է առաջացնում այն մասին, թե որքանով են թվային տեխնոլոգիաները օգտագործվում անկանոն միգրացիան աջակցելու և միգրանտներին մաքսանենգների, թրաֆիքինգի չարաշահումից և շահագործումից խուսափելու համար[5]: Միգրանտները նաև մշակել են հավելվածներ՝ աջակցելու ավելի լավ

---

[2] Informal settlements social marginality, obstacles to access to healthcare and basic needs for migrants, asylum seekers and refugees, second edition, https://www.aerzte-ohne-grenzen.de/sites/default/files/2018-italy-report-informal-refugee-settements.pdf

[3] Skorodumova, O., Melikov, I., Tabasaranskiy, R., Problems of Migration Management in the Conditions of Global Digitalization of Society, International Conference on Electronic Governance and Open Society: Challenges in Eurasia EGOSE 2021, pp 174–185, https://link.springer.com/chapter/10.1007/978-3-031-04238-6_14

[4] Stouffer, S., Intervening opportunities: A theory relating mobility and distance // American Sociological Review. 1940. № 5.

[5] McAuliffe, M., How transnational connectivity is shaping irregular migration: Insights for migration policy and practice from the 2015 irregular migration flows to Europe. Migration

ինտեգրմանը ընդունող երկրներում՝ միաժամանակ հայրենիքում պահպանելով սոցիալական կապերը և ֆինանսական աջակցությունը իրենց ընտանիքներին և համայնքներին, այդ թվում՝ «բջջային կամ թվային փողի» աճող հավելվածների ընդունման միջոցով[6]: Թվային արդյունավետ համակարգը կարող է վերացնել միևնույն տեղեկությունը բազմիցս խնդրելու պրակտիկան, ինչը թույլ կտա տարբեր ծառայություններ մատուցողներին կապվել միմյանց հետ և տեղեկություններ փոխանակել, հատկապես շարժման մեջ գտնվող միգրանտների համար (իր քաղաքացիների համար Իտալիան արդեն սկսել է զբաղվել ազգային թվային ինքնության համակարգի ստեղծմամբ)[7]:

Մեթոդաբանություն: Հետազոտության իրականացման համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել ՄԱԿ «Միգրացիան աշխարհում 2022» զեկույցը, Համաշխարհային բանկի «Համաշխարհային զարգացման զեկույց 2023. Միգրանտներ, փախստականներ, հասարակություններ» միջազգային հրապարակումները:

Վերլուծություն: Փախչելով բռնությունից, պատերազմից, աղքատությունից և բնապահպանական աղետներից՝ շատ մարդիկ, ավելի քան երբևէ, գաղթում են ամբողջ աշխարհում: Դա ոչ թե ցիկլային, այլ կառուցվածքային երևույթ է, որը հնարավոր չէ կասեցնել: Ներկայումս, ՄԱԿ-ի գնահատականների համաձայն, 258 միլիոն մարդ ապրում է իր ծննդավայրից դուրս (աշխարհի բնակչության 3,4%-ը): 1970 թվականին աշխարհի 3,7 միլիարդ մարդկանց մոտ 2%-ն ապրում էր արտասահմանում (ՄԱԿ 2017): Այս ցուցանիշն աճում է անհավասարության, կլիմայի փոփոխության, հակամարտությունների և փոխկապակցվածության պատճառով, որը հեշտացնում է մարդկանց տեղաշարժը[8]:

Միգրացիան, երբ կառավարվում է պատշաճ կերպով, կարող է փոխշահավետ լինել այն երկրների համար, որոնք բախվում են բազմաթիվ մարտահրավերների՝ սկսած երիտասարդության գործազրկությունից և աշխատանքի անհամապատասխանությունից մինչև ծերացող բնակչության ու բարեկեցության համակարգերի ներդրում:

Ի՞նչի կհանգեցնի արհեստական ինտելեկտի հետագա զարգացումը և ինչ հետևանքներ կունենա միգրացիայի վրա: Կարելի է ասել, որ յուրաքանչյուր մարդ ունի «Թվային պրոֆիլ», որը ոչ անձնական ձևով պարունակում է անհատի մասին

Policy Practice, 2016, 6(1):4–10. Available at https://publications.iom.int/books/migration-policy-practice-vol-vi-number-1-februarymarch-2016

[6]Kitimbo, A., Mobile money and financial inclusion of migrants in sub-Saharan Africa. In: Research Handbook on International Migration and Digital Technology (M. McAuliffe, ed.). Edward Elgar, Cheltenham, 2021

[7] Latonero, M., Digital Identity in the Migration & Refugee Context: Italy Case Stud, 2019, p. 28 https://datasociety.net/wp-content/uploads/2019/04/DataSociety_DigitalIdentity.pdf

[8]Long-Lasting Solutions to the Problem of Migration in Europe https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC7183294/

առավել մանրամասն տեղեկատվություն, որի շնորհիվ կհայտնվեն նոր ապրանքներ ու ծառայություններ որոնք մի կողմից կբարձրացնեն միգրանտների շարժունակությունը, ինչպես նաև «ուղեղների հոսքը», իսկ մյուս կողմից միգրացիան տեղի կունենա արդեն թվային տվյալների ձևով՝ հիմնվելով անձի թվային պրոֆիլի վրա, որը կնվազեցնի միգրանտների շարժունակությունը: «Թվային պրոֆիլի» միջոցով կարող է ի հայտ գալ ասենք իրավիճակային ապահովագրություն: Սա նշանակում է, որ միգրանտը անմիջապես կարող է դիմել իրեն անհրաժեշտ ապահովագրական պրոդուկտի համար, իսկ ապահովագրական ընկերությունը անմիջապես կարող է առաջարկել հարմար ապահովագրավճար և ապահովագրել հաճախորդին:

Այսօր միգրացիան արդյունավետ կառավարելու համար շատ կարևոր է հասկանալ, թե ինչպես կանոնավոր միգրացիան կարող է դրական ազդեցություն ունենալ ինչպես ուղարկող, այնպես էլ ընդունող երկրների (հասարակությունների) վրա:

Անվտանգություն փնտրող փախստականների և ապաստան հայցողների անմիջական մտահոգությունների լուծումը պետք է փնտրել համապարփակ օրինական միգրացիոն ռեժիմի մշակման մեջ: Ընդհանուր առմամբ միգրացիան «խնդիր» չէ, քանի որ այն ի հայտ է բերում մի շարք հնարավորություններ և մարտահրավերներ, որոնք պետք է արդյունավետ կառավարվեն ոչ միայն տեղական այլև միջազգային մակարդակով:

Անհրաժեշտ է երկրի երկարաժամկետ տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական ռազմավարությունների մեջ միգրացիան պատշաճ կերպով ինտեգրել: Սա հատկապես հրատապ խնդիր է՝ հաշվի առնելով կանխատեսվող տարածաշրջանային ժողովրդագրական, տնտեսական և սոցիալական փոփոխությունները, ներառյալ Հայաստանի Հանրապետության ծերացող բնակչությունը և աշխատունակ տարիքի բնակչության անկումը գալիք տասնամյակներում:

Ըստ Միգրացիայի վերաբերյալ զեկույցի վերջին 20 տարիներին աշխարհի միգրացիոն հոսքերի կազմում գնալով գերակշռում են աշխատանքային միգրանտները, ներքին տեղահանվածներն ու փախստականները: 2022թ. գնահատված միգրանտների կեսից ավելին աշխատանքային միգրանտներն են 169 մլն (աղյուսակ 2):

Առանձնացնենք ռիսկերի խումբը, որին ենթարկվում են իրենք՝ միգրանտները: Դրանք կարող են դրսևորվել աշխատանքի և բնակարանային շուկաներում, կրթության և առողջապահության ոլորտում, ինչպես նաև միգրանտների առօրյա կյանքում[9]:

---

[9] Бородкина, О., Социальные риски международной иммиграции в Россию/О.И. Бородкина, Н.В. Соколов, А.В. Тавровский /Экономические и социальные перемены: факты, тенденции, прогноз. 2017. – Т. 10. – № 3. С. 114-133. DOI: 10.15838/esc/2017.3.51.6

Աղյուսակ 1

Դոնոր և ընդունող երկրների համար միգրացիայի օգուտների և ծախսերի համեմատություն[10]

	Օգուտներ	Ծախսեր
Ընդունող երկիր	▪ Աշխատանքային ռեսուրսների ավելացում ▪ Ապագա բնական աճի համար ժողովրդագրական բազա ստեղծելու հնարավորություն ▪ Թվային նորագույն տեխնոլոգիաների կիրառում	▪ Վստահության նվազման հետևանքով տնտեսական գործարքների արժեքի ավելացում ▪ Միգրանտների մասնագիտական վերապատրաստման և ինտեգրման ծախսերը
Դոնոր երկիր	▪ Գործազրկության նվազում և աշխատաշուկայի պայմանների բարելավում մնացած բնակչության համար ▪ Միգրանտներից ստացվող դրամական փոխանցումների միջոցով սպառման և ներդրումների խթանում ▪ Տեխնոլոգիական ծառայությունների պասիվ ներդրում	▪ «Մարդկային կապիտալի արտահոսք» ▪ Երկարաժամկետ հեռանկարում երկրում ապրելու պատրաստակամության նվազում

Դոնոր երկրներին է վերաբերում ռիսկերի այն խումբը, որոնք կապված են աշխատունակ բնակչության առավել ակտիվ խմբերի, հատկապես երիտասարդների արտահոսքի և դրանից բխող սոցիալ-ժողովրդագրական կառուցվածքի փոփոխությունների հետ: Վերջին 30 տարիներին բնակչության արտագաղթի հետևանքով ոչ միայն նվազեց բնակչության թվաքանակը, այլև փոխվեցին նրա սեռատարիքային կազմը, ծննդի ու մահվան ընդհանուր չափերը, բնակչությունը դրսևորեց ծերացման միտում: 1990-2023թթ. ՀՀ բնակչության թվաքանակը նվազել է 537.8 հազ. մարդով կամ 15.3%-ով, ընդ որում՝ նվազումը բացառապես պայմանավորված է եղել միգրացիայի բացասական մնացորդով, բացառությամբ 2020թ և 2022թ[11]: Անհրաժեշտ է նշել, որ արտագաղթածների ավելի քան 65%-ը կազմել են ակտիվ վերարտադրողական և աշխատանքային տարիքի

[10] Миграция как фактор экономического роста: стратегические подходы. Пример России, https://www.researchgate.net/publication/331936378_Migracia_kak_faktor_ekonomiceskogo_rosta_strategiceskie_podhody_Primer_Rossii, DOI:10.13140/RG.2.2.29131.03368

[11] Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2023, էջ 39

քաղաքացիները (20-49 տարիքային խումբ), ինչն էապես ազդել է բնակչության տարիքային կառուցվածքի ձևավորման վրա[12]:

Աղյուսակ 2

2000 և 2022 թվականների Համաշխարհային զեկույցներից միգրացիայի հիմնական փաստեր[13]

	2000	2022
Միջազգային միգրանտների գնահատված թիվը՝	173 միլիոն	281 միլիոն
Միգրանտների գնահատված մասնաբաժինը աշխարհի բնակչության մեջ	2.8%	3.6%
Կանանց գնահատված մասնաբաժինը միջազգային միգրանտների մեջ	49.4%	48.0%
Միջազգային միգրանտների շրջանում երեխաների գնահատված մասնաբաժինը	16.0%	14.6%
Միջազգային միգրանտների ամենաբարձր համամասնությամբ երկիր	Արաբական Միացյալ Էմիրություններ	Արաբական Միացյալ Էմիրություններ
Աշխատանքային միգրանտների թիվը	-	169 մլն
Միջազգային փոխանցումների ընդհանուր ծավալը (ԱՄՆ դոլարով)	128 մլրդ	702 մլրդ
Փախստականների թիվը	14 մլն.	26. մլն.
Ներքին տեղահանվածների թիվը	21 մլն.	55 մլն.

Դոնոր հասարակությունների տնտեսությունները մեծապես հիմնված են միգրանտների տրանսֆերտների վրա, ինչը խոչընդոտում է ներքին ռեսուրսների, տեխնոլոգիական նորարարությունների զարգացմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը:

[12] Մովսիսյան, Մ. և ուրիշներ, ՀՀ ժողովրդագրական հիմնախնդիրները պատերազմի և համավարակի հետևանքների գնահատման համատեքստում- Եր.: Տնտեսագետ, 2022.- 218էջ., էջ 6 («Ամբերդ» մատենաշար 50), DOI:10.52174/978-9939-61-245-4, https://asue.am/upload/files/amberd/Amb%2050_compressed.pdf

[13] Доклад о миграции в мире 2022, стр.11, https://publications.iom.int/system/files/pdf/WMR-2022-RU.pdf

Հատուկ ռիսկեր է պարունակում որակյալ մասնագետների արտագաղթը, այսպես կոչված, «ուղեղների արտահոսքը»: Բացի այդ, խախտվում է գենդերային և սերունդների հավասարակշռությունը, ինչը հանգեցնում է ընտանիքի կառուցվածքի, գենդերային կարգի և սոցիալականացման գործընթացների փոփոխության:

Ռիսկերի մյուս խումբը վերաբերում է ընդունող հասարակությանը: Ընդունող երկրում մեծանում է սոցիալական անհավասարության նոր ձևերի ռիսկը, արդյունքում առաջանում է ցածր որակավորում ունեցող աշխատանքային միգրանտների «նոր» ցածր խավ՝ սահմանափակ աշխատանքային և սոցիալական իրավունքներով, որոնց մեծամասնությունը առանց փաստաթղթերի միգրանտներն են: Փաստաթղթեր չունեցող կամ ժամկետանց փաստաթղթեր ունեցող միգրանտները սահմանափակ հասանելիություն ունեն հանրային ծառայություններից[14]:

Երկրները տարբերվում են իրենց հնարավորություններով ու ռեսուրսներով ուստի տարբեր են նաև միգրանտի մտադրությունները: Ստոուֆերի մոդելում երկրի հնարավորությունները գործում են որպես ձգող ուժեր, իսկ խոչընդոտները կամ խնդիրները՝ որպես մղիչ ուժեր: Միգրացիայի հոսքի մեծությունը կախված է ծագման վայրում, ինչպես նաև նպատակակետում մղվող և ձգվող ուժերի գումարից[15]:

Այն քաղաքը, որն ունակ է առաջարկելու ավելի շատ հնարավորություններ, ավելի մեծ ձգողություն ունի և միգրանտի համար դառնում է նպատակակետ: Հակառակը, այն վայրը, որտեղ հնարավորությունները սահմանափակ են, դառնում է ծագման քաղաք: Հետևաբար, որքան մեծ է այս երկու վայրերում առկա հնարավորությունների քանակի տարբերությունը, այնքան մեծ է միգրացիան:

Ծագման վայրի և նպատակակետի միջև հնարավորությունների առկայությունը խանգարում է միգրացիոն հոսքին: Այսպիսով, միգրանտներից շատերը կանգ են առնում միջանկյալ քաղաքներում և չեն գնում դեպի մեծ քաղաք: Միջանկյալ հնարավորությունների մոդելն ունի հետևյալ տեսքը (Նկար 1)

Նկար 1-ում (+) նշանակենք ձգող գործոնները, իսկ (-) վանող գործոնները, տվյալ դեպքում (+) կլինի տվյալ քաղաքի առավելությունները, ինչը կուղղորդի մրցակցային միգրանտների հոսքը, իսկ (-) տվյալ քաղաքի թերությունները հետևաբար այն հանդես չի գա որպես նպատակակետ երկիր: Նկար 1-ում Քաղաք 2-ը ավելի շատ հնարավորություններ ունի (+), քան Քաղաք 1-ը, հետևաբար

[14] Latonero, M., Digital Identity in the Migration & Refugee Context: Italy Case Stud, 2019, p. 33 https://datasociety.net/wp-content/uploads/2019/04/DataSociety_DigitalIdentity.pdf

[15] Theory of Intervening Opportunities by S.A. Stouffer, https://pangeography.com/theory-of-intervening-opportunities/

Քաղաք 1-ն ավելի շատ թերություններ ունի (-), քան Քաղաք 2-ը: Այսպիսով, միգրացիայի զուտ հոսքը կլինի Քաղաք-1-ից ից դեպի Քաղաք-2:



Նկար 1. Միջամտող հնարավորությունների մոդել[16]

Երբեմն, միջամտող հնարավորությունները գերակշռում են Քաղաք 2-ի ձգողական գործոններին: Հետևաբար, ոչ բոլոր միգրանտները, որոնք ծագում են Քաղաք 1-ից հասնում են Քաղաք-2՝ Քաղաք-3-ի միջամտող հնարավորությունների պատճառով: Միգրանտներից ոմանք կարողանում են իրականացնել միգրացիայի իրենց նպատակը Քաղաք 3-ում, ուստի նրանք չեն հեռանում իրենց ծննդավայրից կամ հայրենի քաղաքից:

Ընդունող երկրի վերաբերյալ պատկերացումները փոխվում են արհեստական բանականության (ԱԲ) շնորհիվ: ԱԲ փոխում է մարդու շարժունակության բնույթը. այն մի կողմից կանխում է օրինական միգրացիան, մյուս կողմից նպաստում ուղեղների արտահոսքին: Շատ աշխատանքներ մեքենայացվում են, այդ իսկ պատճառով ցածր որակավորված աշխատուժի օրինական միգրացիան դեպի զարգացած երկրներ դանդաղում է, բայց մյուս կողմից ԱԲ բացում է նոր հնարավորություններ բարձր որակավորում ունեցող աշխատուժի համար արդյունքում մեծանում է «ուղեղների արտահոսքը»: ԱԲ մեծ տվյալների հասանելիության շնորհիվ կարողանում է միգրանտի փոխարեն որոշել թե որ երկիրն ընտրի որպես նպատակակետ, ինչ աշխատանք կատարի և թե ինչ ապրանքներ ու ծառայություններ են նրան անհրաժեշտ: Սա կարող է միգրանտի համար ի հայտ բերել անվտանգության հետ կապված խնդիրներ, հետևաբար միգրանտի անվտանգային հարցերը նոր արդիականություն են

[16] Theory of Intervening Opportunities by S.A. Stouffer, https://pangeography.com/theory-of-intervening-opportunities

ստանում: Այս ուղղությամբ կարգավորումներ են անհրաժեշտ հուսալի, ապահով և անվտանգ միջավայրի ձևավորման համար: Թվայնացման բարձր մակարդակը, ինչպես նաև ԱԲ կիրառումը միգրացիոն կառավարման գործընթացներում անշուշտ դյուրինացնում է ընթացակարգերը և նպաստում օրինական միգրացիային, երկրների համագործակցության ընդլայնմանը, բայց միևնույն ժամանակ ծնում անորոշություններ, որոնք կարող են առաջացնել ռիսկեր թե՛ ընդունող թե՛ դոնոր երկրների համար:

Գիտական նորույթ: Դոնոր և ընդունող երկրների համեմատական վերլուծության հիման վրա թվային փոխակերպումների համատեքստում հիմնավորվել է միգրացիոն գործընթացների կառավարման թվային գործիքակազմի ներդրումը՝ ելնելով աշխատաշուկայի փոփոխություններից:

Եզրակացություն: Հանրապետության համար անհրաժեշտություն է դարձել գործընկեր երկրների հետ համաձայնագրերով թվային սխեմաների միջոցով կառավարելու միգրացիայի գործընթացները արագ փոփոխվող աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, որի համար.

•Անհրաժեշտ է վերանայել բարձրագույն և միջին մասնագիտական կրթության ուսումնական ծրագրերը:

•Դոնոր և ռեցիպիենտ երկրներում նախատեսել կոնկրետ ծրագրեր ուղղված միգրանտների հմտությունների զարգացմանն ու դրանց օգտագործմանը:

•Աշխատանքի հնարավորությունների մասին տեղեկությունները, օրինական միգրացիայի և զբաղվածության համար անհրաժեշտ փաստաթղթերը դյուրամատչելի դարձնել միգրանտների համար:

•Խիստ կարևոր են, որ դրամական փոխանցումները և միգրանտների խնայողությունները ներդրվեն Հայաստանում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2023, էջ 39
2. Մովսիսյան, Մ. և ուրիշներ, ՀՀ ժողովրդագրական հիմնախնդիրները պատերազմի և համավարակի հետևանքների գնահատման համատեքստում- Եր.: Տնտեսագետ, 2022.- 218էջ., էջ 6 («Ամբերդ» մատենաշար 50), DOI:10.52174/978-9939-61-245-4, https://asue.am/upload/files/amberd/Amb%2050_compressed.pdf
3. Бородкина, О., Социальные риски международной иммиграции в Россию / О.И. Бородкина, Н.В. Соколов, А.В. Тавровский // Экономические и социальные перемены: факты, тенденции, прогноз. 2017. – Т. 10. – № 3. С. 114-133. DOI: 10.15838/esc/2017.3.51.6 https://publications.iom.int/system/files/pdf/WMR-2022-RU.pdf

4. Миграция как фактор экономического роста: стратегические подходы. Пример России
5. INFORMAL SETTLEMENTS social marginality, obstacles to access to healthcare and basic needs for migrants, asylum seekers and refugees, second edition, https://www.aerzte-ohne-grenzen.de/sites/default/files/2018-italy-report-informal-refugee-settements.pdf
6. Kitimbo, A., Mobile money and financial inclusion of migrants in sub-Saharan Africa. In: Research Handbook on International Migration and Digital Technology (M. McAuliffe, ed.). Edward Elgar, Cheltenham, 2021
7. Latonero, M., Digital Identity in the Migration & Refugee Context: Italy Case Stud, 2019, https://datasociety.net/wp-content/uploads/2019/04/DataSociety_DigitalIdentity.pdf
8. Long-Lasting Solutions to the Problem of Migration in Europe https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC7183294/
9. McAuliffe, M., How transnational connectivity is shaping irregular migration: Insights for migration policy and practice from the 2015 irregular migration flows to Europe. Migration Policy Practice, 2016, 6(1):4–10. Available at https://publications.iom.int/books/migration-policy-practice-vol-vi-number-1-februarymarch-2016
10. McAuliffe, M., Blower J., Beduschi A., Digitalization and Artificial Intelligence in Migration and Mobility: Transnational Implications of the COVID-19 Pandemic, Societies, 2021, *11*(4), 135, https://doi.org/10.3390/soc11040135
11. Skorodumova, O., Melikov, I., Tabasaranskiy, R., Problems of Migration Management in the Conditions of Global Digitalization of Society International Conference on Electronic Governance and Open Society: Challenges in Eurasia EGOSE 2021, pp 174–185, https://link.springer.com/chapter/10.1007/978-3-031-04238-6_14
12. https://pangeography.com/theory-of-intervening-opportunities/
13. https:/ /pangeography.com/gravity-model-of-migration-w-j-reilly-and-g-k-zipf/
14. https://publications.iom.int/system/files/pdf/WMR-2022-RU.pdf
15. Stouffer, S., Intervening opportunities: A theory relating mobility and distance // American Sociological Review. 1940. № 5.

ՄԻԳՐԱՑԻԱՆ ԴՈՆՈՐ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՂ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՇՈՂԵՐ ՊՈՂՈՍՅԱՆ

Համառոտագիր

Միգրացիայի պատճառները բազում են: Տնտեսական և ոչ տնտեսական նկատառումներով դրդված միգրանտների միջև տարբերությունը հաճախ միաձուլված է, միգրանտների լավագույն համեմատությունը գետն է. այն, ինչ սկսվում է որպես մեկ ալիք, որը կարելի է կառավարել ամբարտակով, կարող է դառնալ դելտա կազմող գետերի մի շարք, որի կառավարումը ինչպես միգրացիան դժվար է դարձնում:

Միգրացիայի արդյունավետ կառավարումը արագ փոփոխվող աշխարհաքաղաքական իրավիճակում անհնար է առանց տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ ներգրավածության, թվային գործիքակազմի փոփոխության ինչն էլ պայմանավորում է մեր **հետազոտության արդիակա-նությունը:**

Հետազոտության **նպատակն է** ուսունասիրել՝ թվայնացման հետևանքները միգրացիան ընդունող և դոնոր երկրների կառավարման գործընթացների վրա: Հետազոտության **խնդիրն է** վերլուծել **ընդունող և դոնոր երկրների միգրացիոն հոսքերը**, ինչպես նաև միգրացիոն գործընթացների արդյունավետ կառավարումը:

Տեղեկատվության հավաքագրման համար կիրառվել են ՄԱԿ «Միգրացիան աշխարհում 2022» զեկույցը, Համաշխարհային բանկի «Համաշխարհային զարգացման զեկույց 2023. Միգրանտներ, փախստականներ, հասարակություններ» միջազգային հրապարակումները:

Գիտական նորույթ: Դոնոր եվ ընդունող երկրների համեմատական վերլուծության հիման վրա թվային փոխակերպումների համատեքստում հիմնավորվել է միգրացիոն գործընթացների կառավարման թվային գործիքակազմի ներդրումը՝ ելնելով աշխատաշուկայի փոփոխություններից:

Բանալի բառեր: Միգրանտ, շարժունակություն, միգրացիոն գործընթացներ, դոնոր երկիր, ընդունող երկիր, համեմատական, ռիսկ, թվային գործիքակազմ:

МИГРАЦИЯ В СТРАНАХ-ДОНОРАХ И ПРИНИМАЮЩИХ: СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ

ШОГЕР ПОГОСЯН

Аннотация

Причин миграции много. Различие между экономическими и неэкономическими мигрантами часто размыто, но лучшим сравнением мигрантов является река; то, что начинается как единственный канал, который можно контролировать с помощью плотины, может превратиться в серию рек, образующих дельту, что значительно затрудняет контроль над миграцией.

Эффективное управление миграцией в быстро меняющейся геополитической ситуации невозможно без активного задействования информационных технологий, смены цифровых инструментов, что и определяет актуальность нашего исследования.

Целью исследования является изучение влияния цифровизации на процессы управления в принимающих миграцию странах и странах-донорах. **Задачей исследования** является анализ миграционных потоков принимающих стран и стран-доноров, а также эффективного управления миграционными процессами.

Для сбора информации использовались доклад ООН «Миграция в мире 2022», международные публикации Всемирного банка «Доклад о мировом развитии 2023: мигранты, беженцы, общества»..

Научная новизна. На основе сравнительного анализа стран-доноров и принимающих стран в условиях цифровых трансформаций обосновано внедрение цифрового инструментария управления миграционными процессами с учетом изменений на рынке труда.

Ключевые слова. Мигрант, мобильность, миграционные процессы, страна-донор, принимающая страна, сравнительный, риск, цифровые инструменты

MIGRATION IN DONOR AND HOST COUNTRIES: COMPARATIVE ANALYSIS

SHOGHER POGHOSYAN

Abstract

The causes of migration are many. The distinction between economic and non-economic migrants is often blurred, but the best comparison of migrants is a river: what begins as a single channel that can be controlled by a dam can become a series of rivers forming a delta, making migration much more difficult to control.

Effective migration management in the rapidly changing geopolitical situation is impossible without the active involvement of information technologies, and the change of digital tools, which determines **the relevance of the research**.

This article aims to study the effects of digitization on the migration management of host and donor countries. **The research objective** is to analyze the migration flows of host and donor countries in the context of digital transformations, as well as the effective management of migration processes.

The UN "World Migration 2022" report and the World Bank's "World Development Report 2023: Migrants, Refugees, Societies" international publications were used as information sources.

Scientific novelty. Based on a comparative analysis of donor and host countries, the introduction of a digital toolkit for managing migration processes in the context of digital transformations was justified (adjusted to changes in the labor market).

Keywords. Migrant, mobility, migration processes, donor country, host country, comparative, risk, digital tools